

теории формальных языков» находится диалогический обмен возражениями (exchange of rejoinders) — а не как обмен информацией, имеющий место в определенное время. Иными словами, Паун фокусирует свое внимание на синтаксическом уровне диалога, на его формальном развитии.

Помимо названных, в сборнике помещены также следующие статьи: «Самопроникновение и самонаблюдение: их роль в анализе этиологии болезни» (А. Стантон); «Нарушение коммуникации с родителями и психозы: познавательный-эволюционный анализ» (Л. Сасс); «Два типа дискурса в безумии Гёльдерлина» (Р. Якобсон и Г. Любе-Гротуэс); «Проблемы ответов на вопросы» (В. Ленерт); «Шутки и логика познаваемой подсознательности» (М. Мински); «Логическая форма, основанная на структурных описаниях событий» (В. А. Мартин); «Лингвистический контекст и контекст ситуации в модели ориентированного на задачу диалога» (Г. Браун); «Теория сообщения и семантика диалога» (Д. Харрах); «Интенциональный человек против экстенционального человека: трудный диалог» (У. Кко); «Выбор динамической модели в интерпретации дискурса» (С. Кушинг); «Уточнение значения посредством перевода на PRUF» (Л.

З.де); «Разговор двух программ друг с другом» (Д. Мак Дональд).

Несмотря на бросающееся в глаза различие между статьями (имеется в виду как проблематика, так и методологическая основа разработки проблем), они имеют много общего. Это прежде всего единый объект изучения — диалог — и его анализ с позиций междисциплинарного изучения, которое, как показывает практика, дает наиболее ощутимый эффект и ценные результаты, и в этом отношении книга показательна.

В рецензируемой книге, как и во всякой, по-настоящему новаторской работе (а она является, безусловно, таковой), возможно, не все бесспорно: в ней есть дискуссионные вопросы, неоднозначные решения. Но тем ценнее становится она, что стимулирует мысль для дальнейшего изучения анализируемых проблем.

В целом рецензируемая книга представляет собой большой вклад в изучение проблем коммуникации. Она будет интересна и полезна прежде всего занимающимся когнитивной наукой, искусственным интеллектом, компьютерами; философам, логикам, семиотикам, психологам. Она, безусловно, должна привлечь внимание и широкого круга лингвистов.

Л. Г. БРУТЯН

#### Գ. Գ. ԱՆԱՆՅԱՆ, Եղիշ Զարեհ, «Սովետական գրող», Երևան, 1987, 388 էջ:

Դեռևս «իր օրերում» Եղիշ Զարեհը «կենդանի լեզուն» էր, իսկ այժմ և ընդմիջում նա ապրող պատմություն է, սերունդների հավերժական ուղեկիցը: Կարևոր գրական ուղի, բարձր քննչի պահին ողբերգականորեն ընդհատված ստեղծագործական կյանք՝ անհավատալի մեծ վաստակով և կենսունակ ավանդներով, միշտ կենդանի ու միշտ այժմեական:

Զարեհի կյանքի լեզունը հետաքրքրել է և՛ ժամանակակիցներին, և՛ հաջորդներին՝ մանավանդ մեծ ու անարդար լուրջությամբ հետո: Ուրեք ստեղծվել են բազմաթիվ ուսումնասիրություններ ու մեծագրություններ, այնուամենայնիվ Զարեհի կյանքի և ստեղծագործության շատ առեղծվածներ տակավին մնում են չբացահայտված, ֆոլդերկված ժամանակի և հանգամանքների խորհրդավոր մշտնջված:

Շատ բան է արվել մեզանում Զարեհի կյանքի ու վաստակի գնահատության ուղղությամբ: Բազմիցս հրատարակվել են նրա երկերի ժողովածուները, իրականացվել է գիտական վեցհատորյա հրատարակությունը, լույս է տեսել «Անտիպ և չհավաքված երկեր» գիրքը, վերջերս նաև՝ Բառաճառող ժողովածուն: Ստեղծվել է գրականագիտության մի ամբողջ բնագավառ՝

չարեհագիտությունը. լույս են տեսել բազմաթիվ մեծագրություններ ու հոդվածներ, «Եղիշ Զարեհ» ուսումնասիրությանը ժողովածուն, «Զարեհյան ընթերցումներ» 4 հատորները (5-րդը հրատարակման ընթացքի մեջ է) և այլն: Եվ սրանք վերջ ու սահման չեն ունենա, քանի որ անմահի է գիտականների ու ընթերցող լայն զանգվածների հարանուն հետաքրքրությունը Զարեհի ստեղծագործության նկատմամբ:

Եղիշ Զարեհը գրական կուրս չէ այդ արտահայտության սովորական, ավանդական իմաստով, այլ կենդանի գոյություն, գրական անճանալի մեծություն, որը հոգևոր վիթխորի հարստություն է ստեղծել սերունդների և դարերի համար: Պատահական չէ, որ նա գնահատվում է միութենական ու համաշխարհային չափանիշներով: Այս պայմաններում Զարեհի մասին գիրք գրելը չափազանց բարդ ու պատասխանատու խնդիր է: Այո՛, պատասխանատվության խոր գիտակցությամբ պիտի մտածեա Զարեհի ստեղծագործությանը ամեն մի հետազոտող:

Յուրաքանչյուր նորահայտ փաստ կամ հայտնի փաստերի նոր մեկնություն մի նոր գիծ է

ավիացեում Չարենցի կյանքի ու ստեղծագործության պատմությունը: Իսկ այդպիսի փաստերը հեշտությամբ ձեռք չեն բերվում, հեշտ չէ նաև անվանի շարենցագետներից հետո նոր խոսք ասելը, թեև նրանց որոշ կարծիքներ ու տեսակետներ վերանայման ու վերագնահատման կարիք ունեն:

Չարենցագիտության ասպարեզում տակալան ու արդյունավետ որոնումներ է կատարել պրոֆ. Գ. Անանյանը: Նա, առանց հայտնի բարդություններից խուսափելու, խորամուխ է եղել Ե. Չարենցի կյանքի ու ստեղծագործության առեղծվածների մեջ, ուսումնասիրել 1910 թթ. ի վեր յույս տեսնող պարբերական մամուլը, Չարենցի վերաբերյալ եղած մեծածավալ գրակառույթներ, Երևանի, Քրիլիսիի, Մոսկվայի արխիվների ու քանդաքանների վավերագրերը, հայտարարել է բազմաթիվ նորահայտ փաստեր, կատարել էական լրացումներ ու նշգրտումներ: Նա գրական աշխարհին հայտնի է իր բանասիրական այլևայլ աշխատություններով, Չարենցի մասին գրեհով ու ճողվածներով: Հատկապես կարևոր են նրա բացահայտումները Չարենցի կենսագրության, Չարենցի և սիմվոլիզմի, Չարենցի և ռուս գրականության առեղծվածների ասպարեզում: Սպասելի է, որ տարիների կուտակումից հետո Գ. Անանյանը չի բավարարվելու միայն առանձին հարցերի ուսումնասիրությամբ և վաղ թե ուշ ստեղծելու է ամբողջական մենագրություն Չարենցի կյանքի և ստեղծագործության մասին: Ահա յույս է տեսել նրա շարենցապատումը՝ «եղիչ Չարենց» մենագրությունը:

Չարենցագիտությանը ծանոթ ամեն մի ընթերցող կարող է օրինակաբար հարց տալ. ի՞նչ նորություն է բերում այս գիրքը, ի՞նչ է ավելացնում նախորդների արածին: Առաջ անցնելով ասեմք, որ այս հարցերին զբախտվող մենագրությունը տալիս է միանգամայն զոհաբերիչ պատասխան: Իսկապես, նրա էջերում ընթերցողը կգտնի նորանոր փաստեր. բարձր ու ինքնատիպ դիտարկումներ. հետաքրքիր նշգրտումներ, որոնք աներկբա են դարձնում մենագրության գիտագործնական նշանակությունը: Այն յույս է տեսել 7000 տպախանակով և հասցեագրված է ոչ միայն մասնագետներին, այլև ընթերցող լայն շրջաններին. ուստի միանգամայն հիշտ է վարվել հեղինակը, աշխատության մեջ օգտագործելով նաև իր նախորդ ուսումնասիրությունների արդյունքները, որոնք, զուգակցվելով նորերի հետ, բացահայտում են Չարենցի և ժամանակի բարդ կապերն ու հարաբերությունները:

Մենագրության «Մուտք» բաժնում հեղինակն ինքն էլ մատնացույց է անում նրա կարևոր արժանիքներից մեկը, այն, որ առաջին անգամ այստեղ է շարադրված Չարենցի առայժմ ամենաընդարձակ կենսագրությունը: «Տար-

օրինակ է, բայց փաստ. որ մինչև օրս չի գրվել բանաստեղծի թեկուզև շատ համեստ կենսագրությունը» (էջ 3).— գրում է նա: Սակայն պետք է ասել, որ հեղինակի ղոճոճության այս ձևակերպումը պարզաբանման կարիք ունի:

Չարենցի «թեկուզև շատ համեստ կենսագրություն» իրականում Գ. Անանյանից առաջ գրել են և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել: Մենագրության ուշադիր ընթերցողը կհնկատի, որ նրա հեղինակը բանավիճում է հենց Չարենցի կենսագիրների հետ, որոնք առուրանալի վաստակ ունեն: Այլ խնդիր է, որ առաջներում չկար հրատարակություն, ուսումնասիրողները չունեին անհրաժեշտ բալոր փաստերը, այսօրվա անկաշկանդ մտածողությունը, ամեն ինչ բացեփրոց ասելու և գրելու հնարավորությունը, հաճախ էլ, հասկանալի պատճառներով, փաստերը աղավաղվում կամ շրջվում էին: Օրինակ՝ հայերենի փրկելու համար ռազմադաշտ մեկնած կամավոր զինվոր Չարենցին կամ դատապարտում էին, կամ լավագույն դեպքում ձգտում էին «արդարացնել» նրա այդ «հոսանքներ»՝ ներկայացնելով նրան «բակամա կամավոր» կամ անմեղամեղալոր: Ավելորդ է ասել, որ 30-ական թթ. իրադարձությունների մասին ստիպված էին... լռել:

Այո՛, ամեն ինչ չէր կարելի գրել, այդ պատճառով էլ շատ բան անդառնալիորեն կորել է, և ապագայում էլ ճազով թե ստեղծվի Չարենցի լիակատար կենսագրություն:

Մանամանփականներն աստիճանաբար հաղթանարմեցին, իսկ ՄՄԿԿ 20-րդ համագումարից հետո շարենցագետները հնարավորություն ունեցան գրելու որոշ երևույթների մասին: Եվ ի պատիվ Գ. Անանյանի պետք է ասել, որ նա՛ է շարադրել Չարենցի ամենաընդարձակ ու առավել ամբողջական կենսագրությունը՝ նորահայտ փաստերի, արխիվային վավերագրերի, ժամանակակիցների տպագրված ու անտիպ հուշերի և բանաստեղծի երկերում առկա կենսագրական տեղեկությունների հիման վրա: Այս ամենի շնորհիվ Գ. Անանյանը կարողացել է վերստեղծել Եղիշ Սողոմոնյանի մանկության, պատանեկության ու այն միջավայրի և մթնոլորտի պատկերը, ուր ձևավորվում էր ապագա մեծ բանաստեղծ Չարենցը:

Ե. Սողոմոնյանը Չարենց դարձավ առաջին՝ «Երեք երգ տխրադալով աղչկան» գրով: Ինչպե՞ս: Գ. Անանյանը բիրում է երեք վկայություններ—պարզաբանում:

Կարիճն Քոթանջյանի ասելով՝ անհանգիստ բնավորության պատճառով ճանաչողները այնքան չար, չար ասացին, որ բանաստեղծը հետագայում այն դարձրեց գրական անուն: Վիվանի վկայությամբ՝ առիթ է դարձել Պուշկինի «Անչար» բանաստեղծությունը, իսկ Մահարու ասելով՝ դիր է խաղացել Կարսում հայտնված ներքին հիվանդությունների բժիշկ Չարենցը: «Ո՛րն է հիշտը: Հաստատապես ղոճվար է ասել: Թերևս ավելի հավանական է Վիվանի հաղորդածը» (էջ 24).— գրում է Գ. Անանյանը:

Որ Կ. Քոթանջյանի բանավոր հաղորդումն իսկապես բանահյուսական արժեք ունի, ակնհայտ է: Քայց ինչո՞ւ է գերապատվություն տրվում Վիվանի հաղորդմանը և բերագնահատվում Մահարու վկայությունը այն դեպքում, երբ երկուսին էլ Ջարենցն անձամբ է պատմել իր գրական անվան ծննդաբանությունը: Ինչո՞ւ չկարծել, որ երկուսն էլ ճիշտ են միասին և անշարժ Ջարենց է դարձել հենց բժշկի ազգանվան օրինակով:

Ընդգծելի են խոսատության «Կյանքի ուղին» բաժնի այն էջերը, որոնք վերաբերում են Ջարենց կամավորին և հեղափոխության զինվորին: Այդ էջերը փաստալից են, և նրանց մեկնաբանություններն էլ՝ հետաքրքիր: Ջարենցի կյանքի այս շրջանի դեպքերը ավելի շատ են արձագանքվել նրա բանաստեղծություններում ու պոեմներում՝ իբրև անցյալի հուշ կամ վերապրում, իբրև անողոք ներկա՝ իր օղբերգական ու հերոսական անցքերով («Դանթեսական առասպել», «Հարդազողի ճամփորդները», «Տաղ անձնական», «Սոմա», «Ամբոխները խելագարված», «Ողջակիզվող կրակ», «Ջարենց-Նամակ» և այլն): Բնական է, որ Գ. Անանյանը հանախ պիտի դիմեր այս երկերին և իր մեկնաբանություններն ուղեկցեր նրանց վերլուծություններով ու բնութագրումներով:

Նախորդ ուսումնասիրողները, վերևում հիշված պատճառներով, հպանցիկ էին անդրադարձել Ջարենց-Աղբալյան առնչությանը: Մենագրության մեջ այս խնդիրն արժանացել է առավել հանգամանալից բնութայան, որով ավելի հավաստի ու ամբողջական է դառնում Աղբալյանի կողմից Ջարենց բանաստեղծի հայտնաբերման պատմությունը, որը հիմնավորվում է գերազանցապես առաջին անգամ շրջանառության մեջ դրվող փաստերով ու վավերագրերով:

Գ. Անանյանն անհարգադուրս է նաև «Սոմա» պոեմի առթիվ Հարություն Սուրխաթյանի՝ «Մշակ» թերթում 1919 թ. տպագրած գրախոսությանը (№ 62): Այս առթիվ հարկ ենք համարում տալ մի քաջստորություն:

Հակադրելով Ջարենցի առաջին զննատողներ Աղբալյանին ու Սուրխաթյանին՝ հեղինակը հաշվի չի առել նրանց վիճակների և բննադատական մտածողության տարբերությունը: Աղբալյանը 1919 թ. ծանոթ է եղել Ջարենցի մինչ այդ հրատարակած բոլոր գրքերին, իսկ Սուրխաթյանը՝ միմիայն «Սոմա» պոեմին: Դրա համար էլ նա գրում էր. «Նոյնիչ Ջարենցը հայ գրականության համար տակավին անծանոթ անձն է» (նշվ. տեղում). ընդունում է միայն նրա «համեստ շնորհք»: Գ. Անանյանն իրավացիորեն չի ընդունում Սուրխաթյանի գրախոսության կոպիտ դրույթները և՛ այդ պոեմի, և՛ Ջարենցի բանաստեղծական կարողությունների մասին, քայց քանի որ նա այլևս չի անդրադառնում Ջարենց-Սուրխաթյան կապին, Սուրխաթյանի ուղղված բննադատական խոսք մեծու է միակողմանի: «Արդեն Սուրխաթյանին

ուղղված գրախոսականում,— գրում է նա.— սաղմնային վիճակում տեսնում ենք այն տեսակետը, որ էիչ հետո պիտի ձևակերպվեր իբրև «կույր տարերի» փառաբանություն: ...Ջարենցը ավելի է այն հայացքը, որ բանաստեղծին դեպի հեղափոխություն է բերում տարերայնորեն՝ անտեսելով այն ներքին տառապանքն ու զգեբերումը, որով հասել էր նա փրկարար ելքի հայտնությանը» (էջ 49—50):

Նախ ասենք, որ Ջարենցին «կույր տարերի երգիչ» անվանել է Գ. Անանյանը, և հետո գրեթե նույն կերպ նրան որակել են Ազատ Վշտունին, Գուրգեն Վանանդեցին, Նորայր Դարբալյանը, Նաիրի Ջարյանը և Ջարենցի մյուս հակառակորդները: Միայն հեղինակի վերահիշյալ բնութագրությանը ծանոթ ընթերցողը կկարծի, թե Սուրխաթյանն է նրանց ձեռքը տվել Ջարենցի դեմ պայքարի զենքեր: Այնինչ 1920—30-ական թվականներին Սուրխաթյանը հանուն Ջարենցի հետևողական պայքար է մղել հենց վանանդեցիական ու դաբադյանական բննադատության դեմ, սկզբունքորեն հերքել Ջարենցին հասցեագրված կեղծ մեղադրանքները, պաշտպանել նրան հակառակորդների խմբակային զոհնիկ ու վտանգավոր հարձակումներից: Կարելի է համոզվել՝ վերընթերցելով Սուրխաթյանի «Ճիշտ բննադատելու պրոբլեմը», «Ինչ պետք է կրծել գիտության գրանիտը» և այլ հոդվածներ, «Հետևյալ տեմպերայան հայ գրականության» գրքի համապատասխան էջերը: Ճիշտ կլինեք, որ հեղինակը գրքի հաջորդ մասերում և հենց 20—30-ական թթ. գրական պայքարին ու մթնոլորտին վերաբերող էջերում անդրադառնալու այս խրոնիկ:

Սովետական հայ գրականությանը և մշակույթին անմնացորդ նվիրված հանճարեղ բանաստեղծը վերջին 17 տարիներին ապրեց բարդ որոնումների, շեղումների ու ստեղծագործական վիթխարի նվաճումների մի ժամանակաշրջան, որը լի էր դրամատիկ իրադարձություններով ու ողբերգական հետևանքներով: Ջարենցի կյանքի և ստեղծագործության այս հատվածի ուսումնասիրության ու զննահատման բնագավառում անուրանալի են Ս. Աղաբալյանի, Հր. Քամբալյանի, էդ. Ջրբալյանի ձեռքբերումները: Քարժ հայացքով է դեպքերին ու երևույթներին հայել մենագրության հեղինակը, կատարել լրացումներ ու ճշգրտումներ՝ հարստացնելով մեր պատկերացումները Ջարենցի մոսկովյան տարիների, 1922—24 թթ. «ձախության» շրջանի, արտասահմանյան ուղևորության, նրա հրատարակչական գործունեության, անձնական կյանքի, նրա դեմ ծավալված խմբակային պայքարի բնույթի և այլ խնդիրների մասին:

Ջարենցի մասին գրած իր առաջին հոդվածներից սկսած Գ. Անանյանը բուռն հետաքրքրություն է ցուցաբերել նրա վաղ շրջանի ստեղծագործության առանձնահատկություններին նկատմամբ: Հատկանշական է, որ հա խնդիրը չի

համարել սպառված. ու ձեռք բերածով չի բավարարվել. անընդհատ պրպտել է, ընդլայնել իր ուսումնասիրության շրջանակները, հայտնաբերել Չարենցի ազդեցությունների և անհատականության ձևավորման շրջանի նորանոր երևույթներ: Հատկապես խոր ուսումնասիրության են արժանացել Չարենցի և սիմվոլիզմի առնչությունները: «Երեք երգ յուրազարկով աղջկան», «Հրա Սրկիր», «Տեսիլածամեր», «Միածան», «Ողջակիզվող կրակ» շարքերի բանաստեղծությունների հիմուս վերլուծությանը Գ. Անանյանը ցույց է տալիս, որ սիմվոլիզմը Չարենցի համար չի եղել հպանցիկ երևույթ, բանաստեղծական ոգևորության պահի հրապուրանք, այլ՝ գրական սկզբունքների կայուն համակարգ, որը որոշակի դեր է խաղացել նրա գեղարվեստական մտածողության ձևավորման ընթացքում: Ընդ որում Չարենցը ոչ միայն գործածում էր սիմվոլիստների մտածողության եղանակը, թեմաներն ու տրամադրությունները, պատկերավորման միջոցները, այլև դրանք զուգակցում էր ազգային ավանդներին, սեփական ռեալիստական ու ռոմանտիկական մտածողությանը: Այդպիսով նա ստեղծում էր իրականի և երազայինի, երկրային առօրյայի ու ցանկալիի հարաբերակցության մի յուրօրինակ կենսափոխարկություն: Այս խաչաձևման ու համադրման մեջ, սակայն, որոշակիորեն գծագրվում էր հանձարեղ պատանու ինքնատիպությունն ու անհատականությունը: Եվ Գ. Անանյանը մատնացույց է անում ռուս և եվրոպական սիմվոլիստների հետ Չարենցի ունեցած և՛ ընդհանրությունները, և՛ տարբերությունները: Համոզիչ են նրա ընդհանրացումներն ու եզրակացությունները: Այն՝ Չարենցը չէր կարող պարփակվել սիմվոլիզմի գեղագիտության շրջանակներում, մանավանդ որ տեսնում էր այդ հասանքի «ճեղքվածքներն» ու, փյուզումը: Նա ստեղծագործաբար էր յուրացրել սիմվոլիստական պոեզիայի մի ֆանի էական առանձնահատկությունները և հասել խոշոր նվաճումների:

Իրավացի է Գ. Անանյանը, պնդելով, որ, չնայած ազդեցություններին, Չարենցի պոեզիայի ֆնարական հերոսը «անվերապահորեն 10-ական թվականների հայ մարդու վշտի ու թախծի յուրովի կրողն է: Այդ վիշտն ու թախծը բոքափելու հուսահատ նիզերով, ներդաշնակության անհանգիստ որոնմամբ նա ընդհանրացնում է սոցիալական ու ֆաղափական կրկնակի ճշմարտության գաղափարը: Դժգոհ հայ մարդու տրամադրությունները» (էջ 189): Բայց անհ, Չարենցի սիմվոլիստական պոեզիան ֆաղափարական հնչողություններից զրկող պատճառների վերաբերյալ նրա բացատրությունն այնուամենայնիվ մնում է թերի. և երևույթն ավելի հիմնավոր մեկնաբանության կարիք ունի:

Խորապես ճանաչելով Ե. Չարենցի գեղարվեստական մտածողության յուրահատկությունները՝ մենագրության հեղինակը հաջորդ գլուխներում ներկայացնում է «Հնդկոմսերյան

հողմերի» մեջ նետված ու հեղափոխության դյուցազներգության արտիչ Չարենցին: Իր ժամանակի զգայնաշափն էր նա, անընդհատ անոգ, օրեցօր նոր հորիզոններ ու բարձունքներ նվաճող, իր երգի հունը խորացնող ու ընդլայնող, բանաստեղծական ներանոր ձևեր ու արտահայտչամիջոցներ հայտնագործող վիթխարի անհատականություն: Ստեղծագործական անսովոր խտնվածքն ու ժամանակի հակասական իրականությունը նրան քլաղարում էին ոչ միայն սիմվոլիստականին, ռոմանտիկականին ու ռեալիստականին խաչաձևում, այլև գաղափարական ու հոգեբանական բարդ անցում ազգային ողբերգությունից դեպի հեղափոխություն, ողբերգականից՝ հերոսականին ու հակառակը, սիմվոլիզմից ու ռոմանտիզմից անցում ռեալիստական նոր ոճի ու մտածողության, անցում քեմայից թեմա ու շարքից շարք, պոեմից պոեմ ու բանաստեղծությունից բանաստեղծություն: Այս բարդ անցումների մեջ օրինաչափություններ հայտնաբերելը և նոր խոսք ասելը ամենևին էլ հեշտ խնդիր չէ, մանավանդ որ նախորդ ուսումնասիրողներն այս ուղղությամբ շատ բան են արել: Բայց Գ. Անանյանի արածն էլ էլի չէ: Հենկելով շարենցագիտության նվաճումների և սեփական հետազոտությունների արդյունքների վրա՝ նա բարձր հայացքով կենում ու վերանայում է հայտնի տեսակետները, բանալիներով մերժում կամ նորովի հիմնավորում ու հաստատում է դրանք, նորսինյալ փաստերի կենությունը անում ուղադրով լրացումներ: Միայն թե առաջին հայացքից տարբերակ է թվում նրա մի արտահայտությունը. «Հույ գրականության 20-րդ դարը Երիշ Չարենցով է սկսվում» (էջ 190): Գուցե Գ. Անանյանը նկատի ունի Չարենցի կողմից նոր գեղարվեստական ոճի ու մտածողության հայտնաբերումը, կամ զուցե այն, որ Չարենցը իսկապես նոր դարադրույթ էր բացում մեր բանաստեղծության զարգացման պատմության մեջ: Այս դեպքում նա բյուրիմացություններից խուսափելու համար պետք է ավելի հստակ ձևակերպեր իր նկատառումը:

Այս կարգի վրիպումները բարեբախտաբար էլի են մենագրության մեջ: Նրա էջերում նոր կողմերով է ներկայացված սովետահայ գրականության ձևավորման շրջանի Չարենցը՝ իբրև գրական շարժման առաջնորդ և «նոր արվեստի օրենսդիր»: Երևում է անհանգիստ, տենդոտ, որոնող, սխալվող ու հայտնագործող Չարենցը՝ մարդը, բանաստեղծն ու տեսաբանը: Ընդ որում նա ներկայացված է ժամանակի գրական բարդ մթնոլորտի, ռուս և համաշխարհային գրականության մեծերի հետ բարդ կապերի և արևոլությունների համապատկերում:

Ե. Չարենցի 1922—24 թթ. որոնումներն ապարդյուն չանցան: Արտասահմանյան ուղևորության ընթացքում և նրանից հետո բանաստեղծը հայտնագործեց մեծ արվեստի գաղտնիները: «Էպիկական լուսաբաց» զբոյն ծրագրային բանաստեղծություններում Չարենցը խստորեն փրձ

նադատում էր իր անցյալի ու գրչակիցների դեռևս շարունակվող սխալները, առաջադրում սոցիալիստական իրականության գեղարվեստական պատկերման նոր սկզբունքներ ու եղանակներ, նվաճում սովետահայ գրականության դասական մակարդակը: Գ. Անանյանը «Եպիկական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները գնահատում է Չարենցի ոճի ու գեղարվեստական մտածողության նոր հատկանիշների ճնշմամբ: Հաջողված են վերջին զրույցների հատկապես այն էջերը, ուր հեղինակը բարձր հայացքով պարզաբանում է ներկայի և գալիքի դիրքերից պատմության իմաստավորման ու գեղագիտական ընկալման շարենցյան միտումները:

Գ. Անանյանի զբոսն առաջին անգամ վերլուծվում ու գնահատվում են Չարենցի կյանքի վերջին տարիներին՝ 1934—37 թթ. գրված մի շարք բանաստեղծություններ, որոնք նոր լույս են սփռում 30-ական թթ. ընդհանուր մթնոլորտի, հայ գրական կյանքի այլևայլ երևույթների և հատկապես Չարենցի դրամայի վրա՝ ավելի ցայտուն դարձնելով մեծ գրողի ու ֆաղափացու վեհ ու ողբերգական կերպարը:

Այս անվիճելի արժանիքների հետ միասին մենագրությունն ունի նաև կառուցվածքային և ինչ-ինչ այլ թերություններ:

Մենագրությունն ունի անկեղծ ներշնչանքով ու գիտական բարձր մակարդակով գրված բաժիններ: Սակայն նրա բոլոր գլուխները շունեն հավասար ուժ, և հեղինակը, տեղ-տեղ թուլացնելով մետոկողականությունը, որոշ հարցեր փրկում է ոչ իրենց տեղում ու միջավայրում: Իս

դարձել է նաև որոշ անհարկի կրկնությունների պատճառ: Արտահայտված վիճահարույց տեսակետներն ու կարծիքները բնական են և գիտական որոնումների անխուսափելի ռզիկիցներ: Սակայն անհրաժեշտ խորությամբ չեն բնկված «Եպիկական լուսաբացն» ու «Գիրք ճանապարհի»: Հեղինակը հպանցիկ է անդրադարձել Չարենցի «վերջին մատյանի» գործերին: Ճիշտ դիտարկումների կողմին, մանավանդ «Մանվան տեսիլ» պոեմի վերլուծության մեջ, առկա են որոշ հակասություններ ու շտապ ձևակերպումներ (տե՛ս, օրինակ, էջ 363, 365):

Գիտական բանավեճ մզնու ակնառու կարողությունը Գ. Անանյանի գլխավոր գեներից մեկն է: Հանախ է նա իր իրավացիությունը և տեսակետների ճշտությամբ հաստատում նախորդների ու ժամանակակիցների հետ բանավիճելով: Այդպես է նա կատարել իր ճշգրտումների զգալի մասը, այդպես է հասել հաջողության՝ բացահայտելով այժմ արդեն անվերապան ճշմարտություններ: Սակայն, ցավոք, որոշ դեպքերում էլ անփույթ է վարվել բանավիճելիս:

Մեր նկատողությունները բխում են մենագրությունը անթերի և կատարյալ տեսնելու ցանկությունից: Ամփոփելով ասեմք, որ Գ. Անանյանը հրատարակել է ճիշտ Չարենցի կյանքն ու ըստնեղծագործությունը նոր կազմերից լուսաբանող մենագրություն: Չարենցագիտությունը հաստատում է մի նոր, արժևալիք աշխատությամբ, որը չեն կարող շրջանցել հանճարեղ բանաստեղծի կյանքով ու ստեղծագործությամբ հետաքրքրվողները:

Ս. Գ. ՄՈՒՐԱԿՅԱՆ